Կայքի ծառայությունների ստացման մասին Ընդհանուր դրույթները և պայմանները

Սույն Պայմանները հանդիսանում են հրապարակային օֆերտա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի հոդված 453-ի համաձայն: Սույն Պայմանների ընդունումը կատարվում է Հյուրերի կողմից հետևյալ քայլերից որևէ մեկը կատարելու պահից՝ https://keygo.io հարթակում գրանցում կամ https://keygo.io/ հարթակում Կացության վայրի ամրագրում:

Բաժին I: Տերմինները

1. Սույն Պայմաններում գործածվող տերմիններն ունեն հետևյալ նշանակությունները՝

Հարթակ - ընդգրկում է https://keygo.io/ հասցեով վեբ կայքում ներբեռնած բոլոր էջերը, որը թույլ է տալիս մուտք գործել կայքի միջոցով ամրագրման ենթակա "Կեցության վայրերի" տվյալների պահեստ:

Կայք – https://keygo.io/ հասցեով Ինտերնետ ցանցի վեբ կայք ներբեռնած բոլոր էջերը:

Հյուր – իրավասու և աշխատունակ ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձ, որն օգտագործում է Հարթակը Կացության վայրի փնտրտուքի և ամրագրման, ինչպես նաև և Կեցության վայրում այլ հնարավոր մատուցվող ծառայությունների մատուցումից օգտվելու համար:

Անձնական սենյակ– Հարթակում Հյուրի հաշվառման գրանցմանը կցած անձնական սենյակ, որտեղ նա կարող է կառավարել իր անձնական ամրագրումները, թերթել Ամրագրումների պատմությունը և այլն: Անձնական սենյակ կարելի է ստեղծել Հարթակում գրանցվելուց հետո:

Կեցության վայր – բնակարան, որի վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրված է Հարթակում և որը հանդիսանում է կեցության ապահովման ծառայությունների առարկա:

Իրավատեր/Կազմակերպող – իրավաբանական կամ գործունակ ֆիզիկական անձ, որը տրամադրում է կեցության վայրի ապահովման ծառայություններ՝ Հարթակի միջոցով:

Ամրագրում –Հյուրի կողմից իրականացվող գործառույթ, որն ուղղված է Կեցության վայրի տրամադրման ծառայություններ պայմանագրի կնքմանը՝ Հարթակում համապատասխան հայտի միջոցով:

Հարթակի օժանդակության թիմ – հարթակ, ուր Հյուրը կարող է դիմել՝ առաջացած խնդիրների դիմաց տեխնիկական օգնություն ստանալու համար, ինչպես նաև հետաքրքրող հարցի վերաբերյալ հավելյալ տեղեկություն ստանալու համար: Հարթակի օժանդակության

թիմ ուղղվող դիմումները ուղղորդվում են

- Telegram WhatsApp կապի միջոցով (Չաթ)
- info@keygo.io էլեկտրոնային հասցեով:

Չաթ – Հարթակում գործող Օժանդակության թիմի հետ հաղորդագրությունների փոխանակման միջոց, որը մատչելի է Telegram WhatsApp

Կայքի ծառայությունների ստացման մասին Ընդհանուր դրույթները և պայմանները (Պայմաններ) – https://eye.keygo.io/terms.pdf հասցեով Ինտերնետ ցանցում տեղակայված սույն փաստաթուղթը:

KEYGO – «ՔԻԳՈ ԷՅ ԷՄ» ՍՊԸ, (ՀՎՀՀ՝01338888, Գրանցման համար՝ 271.110.1322542, Հասցե՝ ք. Երևան, Շիրազի փ 48, բն 31)

2. Պայմաններում կարող են օգտագործվել տերմիններ, որոնք սահմանված չեն Պայմանների սույն Բաժնի 1-ին կետում: Նման դեպքում տերմինի մեկնաբանումը կատարվում է՝ ըստ Պայմանների տեքստի: Պայմանների տեքստում տերմինի միանշանակ մեկնաբանության բացակայության դեպքում հարկ է առաջնորդվել տերմինի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված մեկնաբանությամբ կամ Հարթակում ու համացանցում դրա մեկնաբանության համընդհանուր ընդունված տարբերակով:

Բաժին II: Ընդհանուր դրույթները

1. Օգտվելով Հարթակից՝ Հյուրը ինքնաբերաբար ընդունում է Պայմաններն ամբողջությամբ՝ առանց վերապահումների և բացառությունների և համաձայնելով ներքոնշյալի հետ՝

- Համացանցում https://eye.keygo.io/cookie.pdf հասցեով տեղադրված անձնական տվյալների մշակման համաձայնագիր,
- “Cookie” թղթապանակների նկատմամբ՝ https

Եթե Հյուրը համաձայն չէ Պայմանների հետ և/կամ Պայմանների սույն կետում նշված փաստաթղթերի բովանդակության հետ, ապա պարտավոր էանհապաղ դադարել օգտվել Հարթակից:

Հարթակը իրավասու է ցանկացած պահի, առանց Հյուրին ծանուցելու փոփոխել սույն Պայմանների տեքստը, ինչպես նաև Պայմանների սույն Բաժնի 1-ին կետում նշված փաստաթղթերը: Նման փոփոխություններն ուժի մեջ մտնում են հրապարակման օրվանից, եթե այլ բան ուղղակիորեն սահմանված չէ Պայմաններում: Պայմանների ընթացիկ տեքստը տեղադրված է համացանցում՝ https://eye.keygo.io/terms.pdf ասցեով:

2. Հյուրը պարտավորվում է ինքնուրույն ստուգել Պայմաններում առկա փոփոխությունները։
Պայմանների փոփոխությունների հետ չծանոթանալը հիմք չէ նրանում առկա պարտավորությունների չկատարման, ինչպես նաև սահմանափակումների խախտման դեպքում՝ պատասխանատվությունից խուսափելու համար։

3. Հյուրը կրում է լրիվ պատասխանատվություն իր և իր կողմից հրավիրված՝ Կեցության վայրի հասանելիություն ունեցող անձանց, գործողությունների և/կամ անգործության համար։ Վերոնշյալը ներառում է, սակայն չի սահմանափակվում Կեցության վայրի Ամրագրման ավարտից հետո, Կեցության վայրը և այնտեղ առկա գույքը ընդունելու պահին եղած վիճակում հանձնելու պարտականությունը, Կեցության վայրում առկա գույքին պատճառված վնասները հատուցելու պարտականությունը, բարեխիղճ վերաբերմունքի և Կեցության վայրում առկա գույքի օգտագործման կանոնների պահպանման պարտականությունը։

Բաժին III: Հարթակում գրանցում

1. Հարթակի որոշակի գործառույթներից օգտվելու և/կամ Ամրագրում կատարելու համար Հյուրը պետք է անցնի հետևյալ ընթացակարգը՝

- կայքի միջոցով Ամրագրում կատարելու համար Հյուրին անհրաժեշտ է՝
- սեղմել «Մուտք» կոճակը և հատուկ դաշտ մուտքագրել հեռախոսի համարը,
- հեռախոսավարի վրա ստացված հատուկ կոդը գրանցել դաշտում դրանհատկացված հատուկ տեղում,

ԿԱՄ

- առանց գրանցման ընթացակարգ անցնելու Կեցության վայր ամրագրել՝ որպես չգրանցված օգտատեր ։

2. Հարթակում գրանցումն անվճար է

3. Մեկ հեռախոսահամարով գրանցումը թույլատրվում է միայն մեկ անգամ։ Գրանցման ժամանակ նշված հեռախոսահամարի փոփոխության դեպքում Սպառողը պետք է՝

- նս մեկ անգամ գրանցվի նոր հեռախոսահամարով (այդ դեպքում պատմությունն և հասանելի պրոմոկոդերը չեն պահպանվի)

ԿԱՄ

- դիմել Օժանդակության թիմ, Օժանդակության թիմ դիմումը պետք է իրականացվի գրանցման ժամանակ նշված հեռախոսահամարից։ Նշված նպատակով Օժանդակության թմի հետ կապ հաստատելը կարող է իրականացվել Chat-ի (հաղորդահարթակ) միջոցով։ Այս դեպքում Պատվերների պատմությունը, ինչպես նաև առկա պրոմոկոդերը կպահպանվեն։

4. Հարթակում գրանցվելուց հետո Հյուրի համար ստեղծվում է հաշվեգրանցում և տրամադրվում է մուտք դեպի Անձնական սենյակ։

5. Հյուրերի անձնական տվյալների մշակումն իրականացվում է KEYGO-իկողմից՝ ըստ Համացանցում https:// personal-data հասցեով տեղադրված Անձնական տվյալների մշակման քաղաքականության:

Գրանցվելով Հարթակում՝ Հյուրը համաձայնում է ստանալ տեղեկատվական և գովազդային հաղորդագրություններ -ից, ինչպես նաև Ամրագրումների վերաբերյալ ծանուցումներ հետևյալ եղանակներով՝

- գրանցման ժամանակ տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեին կամ
- զանգերի/SMS/PUSH-ծանուցումների միջոցով, այլ կերպ այն հեռախոսահամարի վրա, որը նշվել է գրանցման ու/ կամ Ամրագրման ժամանակ:

Հյուրն իրավասու է հրաժարվել տեղեկատվական և գովազդային հաղորդագրություններ ստանալուց՝ անջատելով համապատասխան գործառույթը Հարթակի կարգավորումներում և/կամ հետևելով ստացված հաղորդագրության մեջ նշված հրահանգներին:

Բաժին IV: Ամրագրման պայմանները

1. Ամրագրման ձևակերպումը

1.1. Հյուրը ձևակերպում է Ամրագրումն ինքնուրույն՝ օգտվելով Հարթակի գործառույթներից:

1.2. Հարթակում Ամրագրում կատարելիս՝ Հյուրը Իրավատիրոջ գործակալ հանդիսացող KEYGO-ի հետ կնքում է Կեցության վայրի ապահովման ծառայությունների մատուցման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր): Այդպիսի ծառայությունները մատուցվում են Իրավատիրոջ հանձնարարությամբ, Իրավատիրոջ անունից և վերջինիս հաշվին:

1.3. Հարթակի միջոցով Հյուրին տրամադրում է հետևյալ հնարավորությունները՝

Իրականացնել Կեցության վայրի ընտրություն,

- Կնքել կեցության վայրի ապահովման տրամադրման ծառայության Պայմանագիր
- Վճարել Ամրագրման դիմաց,
- Ստանալ Ամրագրման մասին տեղեկատվություն կամ չեղարկել Ամրագրումը:

1.4. Ամրագրումը կատարելիս Հյուրը պարտավոր է ծանոթանալ հարթակում տեղադրված հետևյալ տեղեկատվությանը՝

Կեցության վայրում գործող կանոններին
Կեցության վայր մուտք գործելու և այն լքելու կարգին
Ամրագրման չեղարկման պայմաններին
Կեցության ապահովման ծառայությունների գնին
Վճարման պայմաններին

1.5. Ամրագրման ձևակերպման պահին Հյուրը պարտավոր է Ամրագրման համար տրամադրել անհրաժեշտ ողջ տեղեկությունը, ներառյալ և չսահմանափակվելով ներքոշարադրյալով՝

- Անձնական կապի միջոցների վերաբերյալ տեղեկատվություն,
- Հյուրի հետ միասին Կեցության վայրի ապահովման ծառայություններից օգտվողների քանակը:

1.6. KEYGO-ն իրավասու է արգելափակել Հյուրի համար Ամրագրման կատարման հնարավորությունը, եթե վերջինս բազմիցս չեղարկել է Ամրագրումներըև/կամ խախտել է սույն Պայմանների կանոնները: Արգելափակման ժամկետը սահմանվում է KEYGO -ի կողմից:

1.7. Ամրագրման հաստատումը՝ Հյուրի կողմից կատարված վճարումն է: Կեցության ապահովման ծառայությունները մատուցվում են միայն Հյուրի կողմից վճարման պարտավորությունը կատարելուց հետո:

1.8. Կեցության վայրի ապահովման ծառայությունների մասին Պայմանագիրը համարվում է կնքված, եթե Հյուրը ընտրում է Ամրագրման համար բանկային քարտով վճարման եղանակը և սեղմում է «Ավարտել Ամրագրումը» կամ «Վճարել» կոճակը:

1.9. Վճարելով Ամրագրման/ Կեցության ապահովման ծառայությունների մատուցման համար՝ Հյուրը հաստատում է՝

- Որ Պայմանների սույն Բաժնի 1.4 կետում նշված տեղեկություններն իրեն մատուցվել և իր կողմից ընդունվել են լիարժեք ծավալով,
- Համաձայն է Կեցության ապահովման ծառայությունների բոլոր հիմնական պայմանների հետ:

1.10. Ամրագրումն ավարտելուց և վճարելուց հետո Հյուրը կարող է Հարթակի միջոցով փոփոխություններ կատարել Ամրագրման մեջ միայն մինչև Կեցության վայր մուտք գործելու պահին նախորդող 5-րդ օրը:

2. Ամրագրման արժեքը, վճարման կարգը

2.1. Ամրագրման համար վճարելիս՝ վճարումը կատարվում է KEYGO հաշվարկային հաշվին, որը գործում է Իրավատիրոջ համաձայնությամբ նրա անունից՝ ընդգրկելով KEYGO-ին որպես Իրավատիրոջ գործակալ դրամային միջոցներ ստանալու պարագայում: Հյուրի պարտականությունը համարվում է կատարված վերջինիս սպասարկող բանկի

կողմից վճարման հաստատման պահից:

2.2. Հյուրը հաստատում է իր համաձայնությունն այն բանում, որ Հարթակում իրկողմից տրամադրած Անձնական տվյալները վճարման կամ դրամային միջոցների վերադարձի ժամանակ կարող են KEYGO-ի կողմից տրամադրվել գործարքն իրականացնող բանկին:

3. Ամրագրման չեղարկումը, Ամրագրումից հրաժարվելը

3.1. Հյուրը իրավասու է հրաժարվել Ամրագրումից, եթե Կեցության վայրի նկարագիրը էականորեն չի համապատասխանում իրեն տրամադրված Կեցության վայրի իրական հատկանիշների հետ: Այդ դեպքում Ամրագրումից հրաժարման համար Հյուրից որևէ վճար չի գանձվում: Ընդ որում՝ էական անհամապատասխանություն է համարվում Կեցության վայրի հրապարակվածից տարբերվող լոկացիան/ գտնվելու վայրը, սենյակների, լոգասենյակների, պատժգամբների քանակը, Կեցության վայրի մակերեսը:

3.2. Հյուրը իրավունք ունի առանց վճարի չեղարկել Ամրագրումը, մինչև Ամրագրման օրվան նախորդող 5-րդ օրը:

3.3. Ամրագրման օրվան նախորդող 5-րդ օրվանից սկսած Ամրագրման չեղարկման դեպում Ամրագրման համար վճարված գումարը ենթակա չէ վերադարձման:

4. Հյուրի կողմից ներկայացվող առարկությունները մատուցված ծառայությունների վերաբերյալ

4.1. Հարթակը Հյուրին տրամադրում է առարկումների քննարկման աջակցության գործառույթ:

4.2. Կեցության վայր մուտք գործելու պահից 5 (հինգ) օրվա ընթացքում Հյուրը ունի հնարավորություն Հարթակի միջոցով ուղղել ցանկացած առարկություն՝ կապված կեցության վայրի ապահովման ծառայությունների չմատուցման կամ ոչ պատշաճ մատուցման հետ: Նշված ժամկետում առարկություններ չներկայացնելու պարագայում վերոնշյալ ծառայությունները համարվում են Հյուրի կողմից լրիվ ծավալով ընդունված:

4.3. Առարկություններ ներկայացնելու համար Հյուրը պետք է ներկայացնի իր գրավոր մանրամասն առարկությունը՝ հարթակում գործող օժանդակության թիմին:

Բաժին VI: Այլ պայմանները

1. Հարթակն իրավունք ունի իր անունից և իր հաշվին հայտարարել զեղչեր՝ որի նպատակով կտրամադրի զեղչը գործածող պրոմո-կոդ Հյուրն:

2. Սույն Պայմանների որոշ դրույթները կամ կետերի անվավեր կամ իրավաբանական ուժը կորցրած ճանաչվելը չի հանգեցնում սույն Պայմանների մյուս կետերի և դրույթների

անվավերությանը։

3. Պայմանները կարգավորվում և մեկնաբանվում են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ: Սույն Պայմաններով չկարգավորված հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ։ Պայմաններից դուրս առաջացած բոլոր խնդիրներն ու տարաձայնությունները լուծվում են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ սահմանված կարգով։

4. KEYGO-ն չի երաշխավորում Հարթակի աշխատանքի՝ տեխնիկական խոտանների ու կանխարգելիչ աշխատանքների հետ կապված սառեցումների բացակայությունը, սակայն նախաձեռնում է ջանքեր՝ Հարթակի շուրջօրյա աշխատանքի ապահովման համար։

5. Բոլոր ծանուցումները և այլ հաղորդագրությունները, որոնք պահանջվում կամ թույլատրվում են ուղարկել Հյուրերին սույն Պայմանների շրջանակներում, ձևակերպվում են էլեկտրոնային եղանակով և ուղարկվում են KEYGO-ի կողմից էլ. փոստով, Հարթակում հրապարակման, հաղորդագրությունների (ներառյալ SMS և Chat) բաշխման կամ կապի համաձայնեցված եղանակի միջոցով։

Հրապարակմա ամսաթիվ 31.05.2024